ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	ՆՀ-456
Տիպ	Հրամանագիր
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (13.11.1999-28.02.2000)
Կարգավիճակ	Չի գործում
Սկզբնաղբյուր	ՀՀԱԺՏ 1995/1-2 (1091-1092) 21 հուլիս - 31 օգոստոս, Հոդ.7
Ընդունող մարմին	ՀՀ Նախագահ
Ընդունման ամսաթիվ	25.07.1995
Ստորագրող մարմին	ՀՀ Նախագահ
Ստորագրման ամսաթիվ	25.07.1995
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	25.07.1995
Ուժը կորցնելու ամսաթիվ	20.03.2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85 հոդվածով, ***որոշում եմ.***

I. Սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության հետևյալ կառուցվածքը.

1. Ազգային անվտանգության նախարարություն
2. Առողջապահության նախարարություն
3. Արդարադատության նախարարություն
4. Արդյունաբերության և առևտրի նախարարություն
5. Արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար
6. Արտաքին գործերի նախարարություն
7. Բնապահպանության նախարարություն
8. Գյուղատնտեսության նախարարություն
9. Էկոնոմիկայի նախարարություն
10. Էներգետիկայի նախարարություն
11. Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
12. Կրթության և գիտության նախարարություն
13. Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն
14. Ներքին գործերի նախարարություն
15. Պաշտպանության նախարարություն
16. Պետական եկամուտների նախարարություն
17. Սեփականաշնորհման նախարարություն
18. Սոցիալական ապահովության նախարարություն
19. Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն
20. Տարածքային կառավարման նախարար
21. Տրանսպորտի նախարարություն
22. Փոստի և հեռահաղորդակցության նախարարություն
23. Քաղաքաշինության նախարարություն
24. Ֆինանսների նախարարություն:

(կառուցվածքը փոփ. 20.10.95 ՆՀ-503, խմբ. 08.11.96 ՆՀ-667, 10.06.97 ՆՀ-747, փոփ. 03.07.97 ՆՀ-767, խմբ. 20.04.98 ՆՀ-9, լրաց., փոփ., խմբ. 17.11.98 ՆՀ-150, խմբ. 15.06.99 ՆՀ-287, փոփ. 13.11.99 ՆՀ-426)

II. Սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության հետևյալ կարգը.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն), որի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Կառավարությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումներով, Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի (այսուհետ՝ Վարչապետ) որոշումներով, ինչպես նաև սույն կարգով:

2. Վարչապետը ղեկավարում է Կառավարության ընթացիկ գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը:

Նախարարները ղեկավարում են համապատասխան նախարարությունները կամ համակարգում են պետական կառավարման առանձին բնագավառների գործունեությունը:

3. Սույն կարգը սահմանում է Կառավարության գործունեության կազմակերպման, նիստերի նախապատրաստման, հրավիրման, որոշումների ընդունման և դրանց կատարման ապահովման, այդ բնագավառում Կառավարության և Վարչապետի իրավունքների սահմանազատման և դրանց առնչությամբ ծագած մյուս հարաբերությունների կարգավորման հիմունքները:

Սույն կարգի նպատակն է լուծել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով Կառավարությանը վերապահված լիազորությունների իրականացման կազմակերպական խնդիրները, ապահովել Կառավարության գործունեության օպերատիվությունը և արդյունավետությունը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Կառավարության գործունեությունն իրականացվում է աշխատանքային ծրագրերին համապատասխան:

5. Կառավարության աշխատանքային ծրագրերը կազմվում են յուրաքանչյուր տարվա համար՝ հունվար-դեկտեմբեր ամիսների ընդգրկմամբ:

6. Անհրաժեշտության դեպքում, ելնելով Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման իրավիճակից, հեռանկարներից, առանձին տարածքների զարգացման անհրաժեշտությունից, ինչպես նաև արտակարգ իրավիճակների առաջադրած պահանջներից, կարող են կազմվել Կառավարության գործունեության առանձին ուղղությունների նպատակային և երկարաժամկետ աշխատանքային ծրագրեր:

7. Կառավարության գործունեության ծրագրերը քննարկում և հաստատում է Կառավարությունը:

Տարեկան և նպատակային ծրագրերը քննարկվում և հաստատվում են դրանց գործադրման ժամկետներից ոչ ուշ, քան 10 օր առաջ:

Տարեկան ծրագրերը կազմվում են ըստ եռամսյակների:

8. Կառավարության աշխատանքային ծրագրերի նախագծեր կազմելուն մասնակցում են Վարչապետի խորհրդականները, Կառավարության քարտուղարությունը, Հայաստանի Հանրապետության նախարարությունները և պետական կառավարման հանրապետական և տարածքային մյուս մարմինները:

9. Սույն կարգի 8-րդ կետում նշված մարմինները մինչև յուրաքանչյուր եռամսյակին նախորդող ամսվա 1-ը Կառավարությունն առաջարկություններ են ներկայացնում տվյալ եռամսյակի աշխատանքային ծրագրի մեջ լրացուցիչ հարցեր ընդգրկելու վերաբերյալ, որից հետո Կառավարությունը հաստատում է տվյալ եռամսյակի վերջնական աշխատանքային ծրագիրը:

10. Կառավարության աշխատանքային ծրագրերում փոփոխություններ կարող են կատարել Հայաստանի Հանրապետության Նախագահը, Կառավարությունը, Վարչապետը:

11. Կառավարության աշխատանքային ծրագրերի նախագծերի նախապատրաստումը և հաստատված աշխատանքային ծրագրերի կատարման ստուգումն իրականացնում է Կառավարության քարտուղարությունը:

12. Կառավարության քարտուղարությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում նախապատրաստում և Վարչապետին տեղեկանք է ներկայացնում Կառավարության տվյալ եռամսյակում քննարկած հարցերի վերաբերյալ:

13. Յուրաքանչյուր տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում Կառավարության քարտուղարությունը Վարչապետին զեկուցագիր է ներկայացնում Կառավարության տարեկան աշխատանքային ծրագրերի կատարման վերաբերյալ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՐՑԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

14. Կառավարության քննարկմանն են ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նրա իրավասությանը վերապահված հարցեր:

Կառավարության քննարկմանն են ներկայացվում նաև այն հարցերը, որոնք լուծում չեն ստացել Հայաստանի Հանրապետության նախարարությունների և պետական կառավարման մյուս հանրապետական ու տարածքային մարմինների կողմից՝ ինքնուրույնաբար կամ գործադիր իշխանության մյուս իրավասու մարմինների հետ համատեղ:

15. Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնում են Կառավարության անդամները: Վերջիններիս բացակայության (ժամանակավոր անաշխատունակության, գործուղման, արձակուրդի, պաշտոնի թափուր լինելու) դեպքում Կառավարության քննարկմանը հարցեր կարող են ներկայացնել նրանց փոխարինող պաշտոնատար անձինք:

Կառավարության կառուցվածքի մեջ մտնող նախարարություններին և պետական կառավարման մյուս հանրապետական մարմիններին ենթակա ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները Կառավարության քննարկմանը հարցեր են ներկայացնում համապատասխան նախարարությունների և պետական կառավարման մյուս հանրապետական մարմինների միջոցով:

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները՝ գյուղական և քաղաքային համայնքները Կառավարության քննարկմանը հարցեր են ներկայացնում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ոչ պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները իրենց գործունեության ոլորտների հետ առնչվող հարցերը Կառավարության քննարկմանը կարող են ներկայացնել սույն կետում նշված մարմինների կամ պաշտոնատար անձանց միջոցով՝ ելնելով հարցերի բնույթից և նշված մարմինների կամ պաշտոնատար անձանց իրավասությունից:

16. Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացվում են որպես կանոն՝

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահի իրավասության հարցերով՝ հրամանագրերի կամ կարգադրությունների նախագծերի ձևով.

բ) Կառավարության և Վարչապետի իրավասության հարցերով՝ համապատասխանաբար Կառավարության որոշման և Վարչապետի որոշման նախագծերի ձևով.

գ) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում Կառավարության օրենսդրական

նախաձեռնության իրավունքի իրականացման հարցերով՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումների նախագծերի ձևով:

Օրենսդրական և ենթաօրենսդրական լուծում չպահանջող հարցերը Կառավարության քննարկմանն են ներկայացվում հաշվետվությունների, զեկուցագրերի, առաջարկությունների և գործնականում ընդունված, օրենսդրության պահանջներին չհակասող այլ ձևերով, որոնք ենթակա չեն սույն կարգով նախատեսված համաձայնեցման, եթե այլ բան չի բխում նշված փաստաթղթերի հիմքը հանդիսացող հանձնարարականներից:

17. Կառավարության քննարկմանը կարող են ներկայացվել միայն հիմնավորված, միմյանց չկրկնող և արդեն լուծում ստացած հարցերին սկզբունքորեն նոր լուծում տալու կամ նոր ընդունված օրենսդրության պահանջներին դրանց համապատասխանեցնելու նպատակ հետապնդող հարցեր:

18. Կառավարության քննարկմանը ներկայացվող հարցերի հիմնավորվածության, դրանց որակի, ներկայացված նյութերի արժանահավատության և ամբողջականության համար պատասխանատվություն են կրում հարցը ներկայացնող պաշտոնատար անձինք:

19. Կառավարության քննարկմանը ներկայացվող Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշումների նախագծերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին:

Օրենքների նախագծերը կարող են չհամապատասխանել մյուս օրենքների պահանջներին, եթե դրանք որոշակի բնագավառի իրավահարաբերությունների կարգավորման նոր սկզբունքներ են նախատեսում, ինչպես նաև նպատակ ունեն փոփոխություններ և լրացումներ առաջարկել արդեն իսկ գործող օրենքներում:

20. Կառավարության քննարկմանը ներկայացվող մնացած հարցերը պետք է բխեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից և օրենքներից, Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերից և կարգադրություններից, Կառավարության և Վարչապետի որոշումներից, եթե դրանք Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերի կամ կարգադրությունների, Կառավարության և Վարչապետի որոշումների փոփոխություններ, լրացումներ կամ դրանցով կարգավորվող հարցերի նոր լուծումներ չեն նախատեսում:

21. Կառավարության քննարկմանը ներկայացվող փաստաթղթերը պետք է ունենան ներքին փոխկապակցված կառուցվածք, պարունակեն կոնկրետ առաջարկություններ, ներառյալ գործող օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ, եթե այդպիսիք ակնկալվում են, բովանդակեն քննարկման ներկայացվող հարցի սպառիչ վերլուծությունը, կատարողների առջև դնեն հստակ ձևակերպված նպատակներ ու խնդիրներ, անհրաժեշտության դեպքում՝ պարունակեն նշումներ առաջադրանքների կատարման ժամկետների և կոնկրետ կատարողների վերաբերյալ:

22. Կառավարության քննարկմանը ներկայացվող Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նորմատիվ բնույթի որոշումների նախագծերը պարտադիր կարգով համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ:

Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նորմատիվ բնույթի որոշումների նախագծերը համաձայնեցվում են նաև շահագրգիռ նախարարությունների կամ պետական կառավարման հանրապետական մյուս մարմինների հետ:

Եթե սույն կետում նշված օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը կամ շահագրգիռ պետական կառավարման մյուս մարմիններն ունեն առարկություններ, դիտողություններ կամ առաջարկություններ, ապա դրանք կցվում են այդ ակտերի նախագծերին:

Սույն կետով նախատեսված փաստաթղթերի համաձայնեցումը կատարվում է դրանք ստանալուց հետո 15 օրվա ընթացքում, եթե նախագծերի ծավալից ելնելով ավելի կարճ ժամկետում հնարավոր չէ կատարումն ապահովել:

23. Կառավարության քննարկմանը կամ Վարչապետին ներկայացվող և նորմատիվ բնույթ կրող Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և Վարչապետի որոշումների նախագծերը 10-օրյա ժամկետում պարտադիր կարգով համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ:

Սույն կետով նախատեսված ակտերի նախագծերը, նախքան Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համաձայնեցմանը ներկայացնելը, պետք է համաձայնեցվեն մյուս շահագրգիռ նախարարությունների կամ պետական կառավարման հանրապետական մարմինների հետ: Այդ դեպքում համաձայնեցման համար սահմանվում է ոչ ավելի, քան 5-օրյա ժամկետ:

Եթե սույն կետում նշված ակտերի նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը կամ պետական կառավարման մյուս շահագրգիռ մարմիններն ունեն առարկություններ, դիտողություններ, կամ առաջարկություններ, ապա դրանք կցվում են այդ ակտերի նախագծերին:

24. Սույն կարգի 22-րդ և 23-րդ կետերով նախատեսված համաձայնեցումը կատարում է պետական կառավարման համապատասխան մարմնի ղեկավարը, իսկ նրա բացակայության

դեպքում՝ փոխարինող պաշտոնատար անձը՝ փաստաթղթերի նախագծերի վրա նշագրում կատարելով կամ առանձին նամակով:

25. Սույն կարգի 22-րդ և 23-րդ կետերով նախատեսված կարգով Կառավարության քննարկմանը հարց ներկայացնող պաշտոնատար անձինք Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, ինչպես նաև իրավասու կամ շահագրգիռ մյուս նախարարությունների և այլ պետական մարմինների կարծիքների շուրջ տարաձայնություններ ունենալու դեպքում կազմում են իրենց հիմնավոր առարկությունները և ներկայացնում համապատասխան փաստաթղթերի նախագծեր՝ իրենց առաջարկած խմբագրությամբ:

26. Հայաստանի Հանրապետության տնտեսության առանձին ճյուղերի զարգացման, կապիտալ ներդրումների, նյութական ռեսուրսների և ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ առաջարկությունները սույն կարգի 15-րդ կետում նշված պաշտոնատար անձինք և մարմինները Կառավարություն են ներկայացնում միայն Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հաջորդ տարվա ծրագրի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կազմավորման ժամանակաշրջանում:

Սույն կետի պահանջներից բացառություններ են թույլատրվում, եթե նշված հարցերը ծագում են տարվա ընթացքում՝ վերը հիշատակված պաշտոնատար անձանցից կամ մարմիններից անկախ պատճառներով:

27. Իրավասու կամ շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցված փաստաթղթերի նախագծերը Կառավարություն են ներկայացվում երկու օրինակից՝ սույն կարգի 15-րդ կետում նշված պաշտոնատար անձանց նշագրումով և ուղեկցական նամակով:

Կառավարություն ներկայացվող փաստաթղթերում անհրաժեշտության դեպքում հստակ նշվում է, թե գործող օրենսդրության որ ակտերում և որ մասերում է առաջարկվում փոփոխություններ կամ լրացումներ կատարել կամ, որ ակտերն է անհրաժեշտ ուժը կորցրած ճանաչել, կամ պետք է նախատեսվեն համապատասխան ակտերը փոփոխելու, լրացնելու կամ դրանք ուժը կորցրած ճանաչելու մասին առաջարկություններ նախապատրաստելու վերաբերյալ հանձնարարություններ:

28. Կառավարության քննարկմանը ներկայացվող հարցերի վերաբերյալ փաստաթղթերը ուղեկցական նամակի հետ սահմանված կարգով հանձնվում են Կառավարության քարտուղարության ընդհանուր բաժին, որտեղ դրանք հաշվառվում են և համապատասխան ընթացք ստանում:

Փաստաթղթերի և ուղեկցական նամակի մասին, դրանց ստացման պահից ոչ ուշ, քան մեկօրյա ժամկետում սահմանված կարգով զեկուցվում է Վարչապետին կամ դրանք հանձնվում են Վարչապետի համապատասխան խորհրդականին:

29. Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և Վարչապետի որոշումների նախագծերի կամ այլ փաստաթղթերի կատարման կամ դրանց վերաբերյալ եզրակացություն կամ կարծիք հայտնելու հանձնարարականներ կարող են տալ Վարչապետը կամ վերջինիս հանձնարարությամբ այդ հանձնարարականները փոխանցել տարածքային կառավարման գծով նախարարը, Ազգային ժողովի հետ կապերի գծով նախարարը, ԱՊՀ-ի, Եվրոմիության և միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ կապերի գծով նախարարը, Կառավարության քարտուղար-նախարարը, Վարչապետի խորհրդականները:

Սույն կետով նախատեսված հանձնարարությունները կատարվում են Վարչապետի սահմանած ժամկետներում, իսկ այդպիսի ժամկետներ սահմանված չլինելու դեպքում՝ գործող օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում՝ հաշվի առնելով սույն կարգի պահանջները:

30. Եթե սույն կարգի 29-րդ կետով նախատեսված դեպքերում հանձնարարությունը տրվում է միաժամանակ մի քանի նախարարությունների կամ պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների, ապա հանձնարարության կատարման պատասխանատվությունը դրվում է առաջին հասցեատիրոջ վրա: Հանձնարարություն ստացած մյուս պետական կառավարման մարմինները պարտավոր են կատարման ենթակա փաստաթղթերի վերաբերյալ պատասխանատու կատարողին առաջարկություններ, դիտողություններ և անհրաժեշտ նյութեր ներկայացնել այն հաշվով, որպեսզի վերջինս հնարավորություն ունենա սահմանված ժամկետում պատասխան ներկայացնել Կառավարություն:

Անհրաժեշտության դեպքում պատասխանատու կատարողն իր մոտ խորհրդակցություն է անցկացնում մյուս կատարողների իրավասու ներկայացուցիչների մասնակցությամբ:

31. Սույն կարգով նախատեսված ժամկետները օբյեկտիվ կամ այլ հիմնավոր պատճառներով խախտելու հանգամանքներ առաջանալու դեպքում ժամկետի պահպանման համար պատասխանատու պետական մարմինը հիմնավորված նամակով միջնորդում է Վարչապետին սահմանված ժամկետը երկարաձգելու համար՝ կոնկրետ նշելով իր առաջարկած վերջնական ժամկետը:

Առաջարկությունը հիմնավորված համարելու դեպքում Վարչապետը երկարաձգում է ժամկետը:

32. Կառավարություն ներկայացված փաստաթղթերը նախօրոք քննության են առնում Վարչապետի խորհրդականները, Կառավարության քարտուղարության իրավասու կառուցվածքային ստորաբաժանումները:

Անհրաժեշտության դեպքում այդ քննարկումներին մասնակցում են Կառավարություն հարց ներկայացրած պետական կառավարման մարմինների և տվյալ հարցով իրավասու կամ շահագրգիռ մյուս պետական կառավարման մարմինների ղեկավարները կամ այլ պատասխանատու անձինք:

Այդ ընթացքում Կառավարության քննարկմանը հարց ներկայացնող, ինչպես նաև իրավասու կամ շահագրգիռ պետական կառավարման մարմիններից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, նյութեր, հիմնավորումներ:

Ներկայացված հարցերը Կառավարության քարտուղարության իրավասու կառուցվածքային ստորաբաժանումները պարտավոր են համաձայնեցնել մյուս ստորաբաժանումների հետ, եթե դրանցում շոշափվում են համապատասխան բնագավառներին վերաբերող հարցեր: Տարաձայնությունների առկայության դեպքում փաստաթղթերին կցվում է չհամաձայնեցված հարցերի վերաբերյալ տեղեկանք՝ տարաձայնության պատճառների հիմնավորմամբ:

33. Կառավարություն ներկայացված փաստաթղթերը Կառավարության քննարկմանն են դրվում Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Վարչապետի մակագրությամբ՝ ներկայացված փաստաթղթերի ուղեկցական նամակի վրա, Կառավարության քարտուղարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման և իրավաբանական վարչության եզրակացությունների հիման վրա:

Վարչապետի իրավասությանն առնչվող հարցերը Վարչապետի համապատասխան խորհրդականի, Կառավարության քարտուղարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման և իրավաբանական վարչության եզրակացությամբ ներկայացվում են Վարչապետին:

34. Սույն կարգի պահանջների խախտումով Կառավարություն ներկայացված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծերը և դրանց վերաբերյալ մյուս նյութերը Կառավարության քարտուղար-նախարարը վերադարձնում է՝ դրանք սահմանված կարգով ներկայացնելու համար:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ, ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

35. Կառավարությունն իր գործունեությունը իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են հինգշաբթի օրերին:

Անհրաժեշտության դեպքում Կառավարության նիստերը կարող են հրավիրվել նաև այլ, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերի:

Կառավարության նիստերի նախապատրաստման ամբողջ աշխատանքը, ինչպես նաև նիստերի անցկացումն ապահովում է Կառավարության քարտուղարությունը:

36. Կառավարության նիստերը հրավիրվում են դրանց վերաբերյալ կազմված ամենամսյա ժամանակացույցին համապատասխան, որով նախատեսվում են հերթական նիստերի անցկացման օրը, նիստերի օրակարգի հարցերը, զեկուցողները, հրավիրվողների ցուցակը:

37. Կառավարության նիստերի ժամանակացույցը, ներառյալ օրակարգը, հաստատում է Վարչապետը:

Կառավարության նիստերի ժամանակացույցում, դրանով նախատեսված օրակարգի հարցերում փոփոխություններ կարող են կատարվել Հայաստանի Հանրապետության նախագահի, Վարչապետի նախաձեռնությամբ, ինչպես նաև Կառավարության անդամների առաջարկությամբ:

38. Կառավարության նիստերի ժամանակացույցը մշակում է Կառավարության քարտուղարությունը՝ ելնելով Կառավարության գործունեության տարեկան նպատակային աշխատանքային ծրագրերից և ընթացիկ հրատապ խնդիրներից՝ պահպանելով սույն կարգով նախատեսված պահանջները:

39. Արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Վարչապետի նախաձեռնությամբ կամ Կառավարության որոշմամբ:

40. Կառավարության նիստերի և դրանցում քննարկվելիք հարցերի մասին նախօրոք, ոչ ուշ, քան նիստերը սկսվելուց երեք օր առաջ, տեղեկացվում են Կառավարության անդամները, քննարկման ենթակա հարցերով զեկուցող պատասխանատու պաշտոնատար անձինք և հրավիրվողները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ անձինք:

Կառավարության անդամներին և հրավիրվող պատասխանատու անձանց սույն կետով նախատեսված ժամկետից ոչ ուշ տրամադրվում են նաև քննարկման ենթակա հարցերին առնչվող նյութերը:

41. Կառավարության նիստերն անցկացվում են Կառավարության նստավայրում:

42. Անհրաժեշտության դեպքում Կառավարության նիստերը կարող են անցկացվել արտագնա:

Արտագնա նիստերը կարող են անցկացվել հետևյալ դեպքերում՝

ա) արտակարգ իրավիճակի առաջացման դեպքում, երբ դրանից բխող Կառավարության իրավասության հարցերը կարող են առավել արդյունավետ քննարկվել և լուծվել արտակարգ իրավիճակի առաջացման վայրում.

բ) պետական կարևոր նշանակություն ունեցող իրադարձության կապակցությամբ՝ այդպիսի իրադարձության վայրում:

Կառավարության արտագնա նիստեր կարող են անցկացվել նաև այլ դեպքերում՝

Վարչապետի նախաձեռնությամբ և Հայաստանի Հանրապետության նախագահի համաձայնությամբ:

43. Կառավարության նիստերը սկսվում են նախօրոք նշանակված ժամին և ավարտվում են նույն օրը: Նիստերը կարող են անցկացվել ընդմիջումներով:

Տևական քննարկում պահանջող հարցերի քննարկումները կարող են հետաձգվել հաջորդ օրը, իսկ լրացուցիչ փաստաթղթեր կամ ուսումնասիրություններ պահանջող հարցերը՝ հաջորդ հերթական կամ արտահերթ նիստի օրը:

44. Կառավարության նիստերին (այդ թվում՝ դռնփակ) մասնակցում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը:

Կառավարության նիստերին հրավիրվում են Վարչապետի խորհրդականները, օգնականները, Կառավարության քարտուղար-նախարարի տեղակալները, քարտուղարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, մամուլի ծառայության ղեկավարը:

Կառավարության քարտուղարության այլ պատասխանատու աշխատողները Կառավարության նիստերին ներկա են գտնվում միայն այն հարցերի քննարկման ժամանակ, որոնց նախապատրաստմանը նրանք մասնակցել են:

Կառավարության նիստերին կարող են հրավիրվել նաև գիտության գործիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ անձինք:

45. Կառավարության նիստերն անցկացվում են դռնփակ, եթե՝

ա) քննարկվում են Հայաստանի Հանրապետության գաղտնիք համարվող տեղեկությունների հետ առնչվող հարցեր.

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 59 հոդվածով նախատեսված դեպքերում քննարկվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին դիմելու հարցը:

46. Վարչապետը հրավիրում և վարում է Կառավարության հերթական և արտահերթ նիստերը, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության Նախագահն ինքն է ստանձնում նիստերի հրավիրման կամ վարման պարտականությունները:

47. Կառավարության նիստերին Կառավարության անդամների մասնակցությունը պարտադիր է:

Կառավարության նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է Կառավարության անդամների առնվազն կեսից ավելին:

48. Տվյալ նիստի օրակարգի հարցերը ընդունվում են առանց քվեարկության՝ նիստը վարողի հրապարակմամբ:

Կառավարության անդամի (անդամների) առարկության դեպքում տվյալ հարցը օրակարգում թողնելու խնդիրը լուծվում է քվեարկությամբ՝ առարկողի (առարկողների) հիմնավորումները լսելուց հետո:

49. Օրակարգի հարցերի քննարկման հերթականությունը սահմանում է Կառավարության նիստը վարողը:

50. Քննարկումներից առաջ տվյալ հարցի վերաբերյալ լսվում է համապատասխան զեկուցում, որով հանդես գալու իրավունք ունեն Կառավարության անդամները, վերջիններիս նախնական խնդրանքով և նիստը վարողի թույլտվությամբ՝ նաև նրանց փոխարինող պաշտոնատար անձինք:

Կառավարությունում քննարկվող հարցերի վերաբերյալ զեկուցման համար տրվում է մինչև 20 րոպե ժամանակ, ելույթների համար՝ մինչև 5 րոպե, տեղեկանքների համար՝ 2 րոպե: Նիստը վարողը, անհրաժեշտության դեպքում, կարող է սահմանել այլ ժամկետներ:

51. Զեկուցմանը հաջորդում են հարցի շուրջ ելույթները:

Նիստը վարողը քննարկվող հարցի վերաբերյալ իր կարծիքը արտահայտում է վերջում:

52. Ելույթներն ավարտված են համարվում զեկուցողի կողմից քննարկումների վերաբերյալ իր կարծիքն արտահայտելուց հետո, եթե նա չի հրաժարվում դրանից, կամ, եթե որևէ պատճառով բացակայում է նիստից:

53. Օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ Կառավարության որոշումն ընդունվում է այդ հարցի քննարկումն ավարտելուց հետո, նախքան հաջորդ հարցի քննարկմանն անցնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցի քննարկումը հետաձգվում է:

54. Կառավարության որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցող Կառավարության անդամների կեսից ավելին:

Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

Քվեարկությանը մասնակցում են միայն Կառավարության անդամները:

55. Հայաստանի Հանրապետության օրենքների և Ազգային ժողովի որոշումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների նախագծերը Կառավարության հավանությանն արժանանալու դեպքում համապատասխան արձանագրության հետ սահմանված կարգով ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով կամ Հայաստանի Հանրապետության Նախագահին:

Եթե առաջանում է Հայաստանի Հանրապետության օրենքների և Ազգային ժողովի որոշումների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների նախագծերի լրամշակման անհրաժեշտություն, ապա դրանք ներկայացնող կամ իրավասու պետական այլ մարմիններին տրվում են համապատասխան հանձնարարականներ: Ներկայացված նախագծերը մերժելու դեպքում դրանց վերաբերյալ կազմված արձանագրություններն ուղարկվում են նախագծերը ներկայացնողներին կամ այլ իրավասու պետական մարմիններին:

56. Վարչապետը ստորագրում է Կառավարության որոշումները և ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահի վավերացմանը:

Կառավարության որոշումների հավելվածները ստորագրում է Կառավարության քարտուղար-նախարարը:

Կառավարության որոշումները Վարչապետի ստորագրությանն է ներկայացնում Կառավարության քարտուղար-նախարարը:

(56-րդ կետը փոփ. 20.10.95 ՆՀ-503)

57. Այն որոշումների նախագծերը, որոնք թեև սկզբունքորեն ընդունվել են, սակայն դրանց վերաբերյալ Կառավարության նիստերում քննարկումների ժամանակ արվել են դիտողություններ, կատարվել լրացումներ կամ փոփոխություններ, լրամշակվում են Կառավարության քարտուղարության կառուցվածքային ստորաբաժանումների կամ նիստերում կազմված հանձնախմբերի կողմից՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարությունների, պետական կառավարման մյուս հանրապետական և տարածքային մարմինների հետ համատեղ, որից հետո ներկայացվում են Վարչապետի ստորագրմանը՝ վերջինիս կողմից սահմանված ժամկետում:

58. Կառավարության նիստերը արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը ապահովում է Կառավարության քարտուղար-նախարարը:

Կառավարության նիստերի արձանագրությունները ստորագրում է նիստը վարողը:

59. Նիստերի ավարտից հետո Կառավարություն ներկայացված փաստաթղթերի նախագծերը և դրանց կից նյութերը պահվում են Կառավարության քարտուղարությունում:

Եթե նիստերի արձանագրություններով հանձնարարություններ են տրվել Հայաստանի Հանրապետության նախարարություններին, պետական կառավարման մյուս հանրապետական և տարածքային մարմիններին և այլ կազմակերպությունների, ապա Կառավարության քարտուղարությունը 24 ժամվա ընթացքում դրանք արձանագրություններից քաղվածքների ձևով ուղարկում է նշված մարմիններին և կազմակերպություններին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

60. Կառավարության որոշումները Կառավարության քարտուղարությունը գրանցում է որոշումների գրանցման մատյանում՝ դրանց տալով հերթական համարներ:

Յուրաքանչյուր տարվա համար որոշումների համարակալումները սկսվում են հունվարի առաջին նիստի առաջին որոշումից և ավարտվում տվյալ տարվա դեկտեմբերի վերջին որոշումով:

61. Կառավարության որոշումները վավերացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը, որոնք ուժի մեջ են մտնում վավերացումից հետո՝ որոշմամբ նախատեսված պահից, իսկ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 78 հոդվածով նախատեսված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի ստորագրման պահից, եթե Ազգային ժողովը այլ ժամկետ չի սահմանում:

62. Կառավարության որոշումները Հայաստանի Հանրապետության Նախագահի վավերացնելուց հետո պահվում են Կառավարության քարտուղարությունում: Վավերացնելուց հետո դրանք եռօրյա ժամկետում Կառավարության քարտուղարությունը առաքում է Հայաստանի Հանրապետության նախարարություններ, պետական կառավարման մյուս հանրապետական և տարածքային մարմիններ, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպություններ:

Կառավարության որոշումները առաքում է քարտուղարությունը՝ իր սահմանած կարգով:

63. Կառավարության որոշումները հրապարակվում են հատուկ ժողովածուներում: Անհրաժեշտության դեպքում դրանք հրապարակվում են մամուլում:

Կառավարության այն որոշումները, դրանց առանձին կետերը կամ մասերը, որոնք պարունակում են Հայաստանի Հանրապետության գաղտնիք համարվող տեղեկություններ, հրապարակման ենթակա չեն:

64. Մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող կառավարության որոշումները, ինչպես նաև այն որոշումները, որոնք նախատեսած միջոցառումների կարևորության կամ հրատապության առումով ենթակա են անհապաղ հրապարակման, զանգվածային լրատվության միջոցներով հայտնվում են ի գիտություն բոլորի:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

65. Վարչապետի աշխատակազմի ղեկավարը Հայաստանի Հանրապետության նախագահից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից փաստաթղթեր ստանալու մասին նույն օրը զեկուցում է Վարչապետին:

66. Հայաստանի Հանրապետության նախարարություններից, պետական կառավարման մյուս հանրապետական և տարածքային մարմիններից ստացված գրություններին, նամակներին, հեռագրերին և Կառավարության կամ Վարչապետի որոշում չպահանջող մյուս փաստաթղթերին ընթացք է տրվում այն դեպքում, երբ դրանցում բարձրացված հարցերը մտնում են Կառավարության կամ Վարչապետի իրավասության շրջանակների մեջ կամ, եթե այդ հարցերը համապատասխան նախարարություններում, գործադիր իշխանության

հանրապետական և տարածքային մյուս մարմիններում լուծում չեն ստացել:

67. Կառավարությունում ստացված և Կառավարության կամ Վարչապետի որոշումների ընդունում չպահանջող գրությունների, նամակների, հանձնարարականների, հեռագրերի ու մյուս փաստաթղթերի կապակցությամբ Վարչապետը մակագրության ձևով հանձնարարականներ է տալիս պետական կառավարման համապատասխան մարմիններին անմիջականորեն կամ դրանք փոխանցում Կառավարության քարտուղար-նախարարի միջոցով: Վարչապետի կողմից սահմանված կարգով տարածքային կառավարման գծով նախարարը, Ազգային ժողովի հետ կապերի գծով նախարարը, ԱՊՀ-ի, Եվրոմիության և միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ կապերի գծով նախարարը, Կառավարության քարտուղար-նախարարը, Վարչապետի խորհրդականները հանձնարարականներ են տալիս Կառավարության քարտուղարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

Անհրաժեշտության դեպքում սույն կետում նշված փաստաթղթերի առնչությամբ օպերատիվ խորհրդակցություններ են անցկացնում Վարչապետը, նրա կողմից լիազորված Կառավարության որևէ անդամը կամ Կառավարության քարտուղարության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը: Խորհրդակցությունների վերաբերյալ կազմվում են արձանագրություններ, որոնք ստորագրում են դրանք անցկացնող պաշտոնատար անձինք:

68. Սույն կարգի 66-րդ կետով նախատեսված փաստաթղթերի վերաբերյալ Վարչապետին զեկուցելու համար դրանք նախապատրաստելու, համապատասխան մակագրություններով հանձնարարականներ, խորհրդակցությունների արձանագրություններ ձևակերպելու, կատարողներին և Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարություններին, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմիններին տալու կարգը սահմանում է Վարչապետը:

Սույն կետում նշված հանձնարարականները կարող են տրվել Կառավարության կամ Վարչապետի որոշումների, ինչպես նաև Վարչապետի կամ վերջինիս հանձնարարությամբ՝ Կառավարության քարտուղար-նախարարի ստորագրությամբ փոխանցված հանձնարարականների կատարման ապահովման, Կառավարության կամ Վարչապետի որոշումների նախագծերի կամ դրանց վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստման, ինչպես նաև Վարչապետի կողմից նախարարների աշխատանքների համակարգման նպատակով:

69. Սույն բաժնով նախատեսված հարցերի կապակցությամբ տրված հանձնարարականները Հայաստանի Հանրապետության նախարարությունները, պետական կառավարման հանրապետական և տարածքային մյուս մարմինները պետք է կատարեն դրանցում նախատեսված ժամկետներում, իսկ այդպիսի ժամկետներ սահմանված չլինելու դեպքում՝ գործող օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Հանձնարարականների կատարման ժամկետը կարող է երկարաձգել միայն այն սահմանող պաշտոնատար անձը:

70. Եթե հանձնարարությունը տրվում է միաժամանակ մի քանի կատարողների, ապա դրա կատարման համար պատասխանատու է համարվում առաջին հասցեատերը: Մյուս կատարողները համահավասար պատասխանատվություն են կրում հանձնարարության ժամանակին և որակով կատարման համար և պարտավոր են հանձնարարականի վերաբերյալ իրենց կարծիքը, եզրակացությունը, առաջարկությունները կամ դիտողությունները առաջին հասցեատիրոջը ներկայացնել այն հաշվով, որպեսզի վերջինս հնարավորություն ունենա սահմանված ժամկետներում պատասխանել Կառավարությանը:

71. Հանձնարարությունը համարվում է կատարված, եթե լուծված են դրանում բարձրացված բոլոր հարցերը կամ դրա վերաբերյալ տրվել է ըստ էության պատասխան:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

72. Վարչապետը որոշումներ է ընդունում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

73. Վարչապետը որոշումներ ընդունում է իր նախաձեռնությամբ:

Վարչապետի որոշումներ ընդունելու վերաբերյալ հարց կարող են բարձրացնել նաև սույն կարգի 15-րդ կետում նշված պաշտոնատար անձինք:

Վարչապետն իր որոշումներով՝

ա) լուծում է օպերատիվ կառավարման հետ կապված ընթացիկ հարցերը.

բ) հաստատում է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման մյուս հանրապետական մարմինների կանոնադրությունները, կառուցվածքը, նախարարությունների կոլեգիաների կազմը և կենտրոնական ապարատի աշխատողների թվաքանակը:

Ազգային անվտանգության նախարարության, արտաքին գործերի նախարարության, ներքին գործերի նախարարության և պաշտպանության նախարարության կանոնադրությունների, կառուցվածքի, նախարարությունների կոլեգիաների կազմի վերաբերյալ Վարչապետի որոշումները վավերացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը.

գ) օգտագործում է Կառավարության պահուստային ֆոնդի միջոցները.

դ) ***(ենթակետն ուժը կորցրել է 20.10.95 ՆՀ-503)***

ե) կարգավորում է Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի

Հանրապետության Ազգային ժողովի որոշումների կիրարկման հետ կապված հարցերը.
զ) որոշում է գործուղումների, ընդունելությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարցերը.
է) օպերատիվ հարցերի լուծման նպատակով ստեղծում է հանձնաժողովներ՝ հաստատելով դրանց կանոնադրությունները և անհատական կազմը.
ը) վավերացնում է Հայաստանի Հանրապետության միջգերատեսչական միջազգային պայմանագրերը.
թ) տալիս է միջկառավարական պայմանագրեր ստորագրելու լիազորություն.
ժ) նշանակում և պաշտոնից ազատում է նախարարների տեղակալներին, Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մեջ չընդգրկված պետական կառավարման հանրապետական մարմինների ղեկավարներին և նրանց տեղակալներին, ինչպես նաև հատուկ նշանակության պետական ձեռնարկությունների ղեկավարներին՝ խորհրդակցելով համապատասխան նախարարների և պետական կառավարման հանրապետական մյուս մարմինների ղեկավարների հետ:
Ազգային անվտանգության, արտաքին գործերի, ներքին գործերի և պաշտպանության նախարարների տեղակալներին նշանակում և ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Վարչապետի ներկայացմամբ.
ժա) խրախուսում և կարգապահական ներգործության միջոցներ է կիրառում նախարարների, նրանց տեղակալների, պետական կառավարման մյուս հանրապետական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների նկատմամբ:
Վարչապետը կարող է նպատակահարմարությունից ելնելով իր իրավասության մեջ մտնող առանձին հարցերի լուծումը կարգավորել Կառավարության որոշումներով:
Վարչապետը՝
ա) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներպետական հարաբերություններում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում.
բ) հաշվեկշռից հաշվեկշիռ է հանձնում նախարարությունների և պետական կառավարման մյուս հանրապետական և տարածքային մարմինների տնօրինության տակ գտնվող շենքերը, կառույցները.
գ) փոփոխում է նախարարությունների, պետական կառավարման մյուս հանրապետական և տարածքային մարմինների ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների ենթակայությունը.
դ) որոշումներ է ընդունում՝
- պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների, բյուջետային ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների աշխատանքի վարձատրման համակարգի կարգավորման մասին.
- կազմակերպական միջոցառումների մասին.
- Վարչապետի աշխատակազմի կառուցվածքի և գործունեության կարգի մասին.
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարչության կազմում Կառավարության ներկայացուցիչներ նշանակելու և ազատելու մասին.
- միջազգային և միջկառավարական մարմիններում Կառավարության ներկայացուցիչներ նշանակելու մասին.
- գերատեսչական նորմատիվ և պետական կառավարման տարածքային մարմինների ակտերը կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու մասին.
- օրենսդրությամբ նախատեսված այլ հարցերի մասին:
(73-րդ կետը խմբ., լրաց., փոփ. 20.10.95 ՆՀ-503)
74. Վարչապետի որոշումները ուժի մեջ են մտնում դրանցում նախատեսված պահից:
Վարչապետի որոշումները ստորագրում է (են) նաև դրանք իրագործող նախարարը (նախարարները), եթե՝
ա) այն ուղղակիորեն բխում է գործող օրենքների պահանջներից.
բ) որոշումը պարունակում է պետական բյուջեի միջոցներից օրենսդրությամբ թույլատրվող նպատակներով հատկացումներ կատարելու հանձնարարական (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից).
գ) ***(ենթակետն ուժը կորցրել է 20.10.95 ՆՀ-503)***
դ) ***(ենթակետն ուժը կորցրել է 20.10.95 ՆՀ-503)***
ե) Վարչապետն ինքն է անհրաժեշտ գտնում, որպեսզի իր կողմից ընդունվող որոշումը ստորագրվի նաև համապատասխան նախարարի (նախարարների) կողմից:
(74-րդ կետը փոփ. 20.10.95 ՆՀ-503)
75. Վարչապետի բացակայության դեպքում, նրա որոշումներին առնչվող հարցերի շրջանակներում, վերջինիս պարտականությունները կատարում է Կառավարության անդամներից որևէ մեկը՝ Վարչապետի որոշման հիման վրա՝ նրա կողմից սահմանված կարգով:
76. Վարչապետի որոշումները գրանցվում, հաշվառվում և համարակալվում են Կառավարության որոշումների համար սահմանված կարգով՝ առանձին գրանցամատյանում: Վարչապետի որոշումները պահպանվում են Կառավարության քարտուղարությունում:
77. Վարչապետի որոշումները դրանց ստորագրման պահից երկօրյա ժամկետում ուղարկվում են Հայաստանի Հանրապետության նախարարություններ, պետական կառավարման հանրապետական և տարածքային մյուս մարմիններ, ինչպես նաև այլ

շահագրգիռ կազմակերպություններ:

78. Վարչապետի որոշումները հրապարակվում են հատուկ ժողովածուներում: Անհրաժեշտության դեպքում Վարչապետի որոշումները հրապարակվում են մամուլում:

Վարչապետի որոշումների ընդունման և հրապարակման հետ կապված կիրառվում են Կառավարության որոշումների համար սույն կարգով նախատեսված պայմանները:

79. Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման մյուս հանրապետական մարմինների կողմից ընդունված նորմատիվ ակտերը (գերատեսչական նորմատիվ ակտեր) իրավաբանական ուժ են ստանում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից սահմանված կարգով պետական գրանցման պահից:

Գերատեսչական նորմատիվ ակտերի պետական գրանցման կարգը սահմանում է Կառավարությունը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

80. Կառավարությունը մշտական վերահսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության նախարարությունների և պետական կառավարման հանրապետական և տարածքային մյուս մարմինների գործունեության, ինչպես նաև Կառավարության և Վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման ապահովման նկատմամբ:

81. Վարչապետը կամ նրա հանձնարարությամբ Կառավարության քարտուղար-նախարարը, Վարչապետի աշխատակազմի ղեկավարը և Կառավարության քարտուղարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները պարբերաբար քննության են առնում Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման հանրապետական և տարածքային մյուս մարմինների կողմից Կառավարության և Վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման արդյունքները և միջոցներ ձեռնարկում թերությունները վերացնելու և ծագած դժվարությունները հաղթահարելու ուղղությամբ:

Կառավարությունը և Վարչապետը պարբերաբար լսում են Հայաստանի Հանրապետության նախարարների, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների ղեկավարների հաշվետվությունները Կառավարության և Վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման ընթացքի և դրանց կատարման ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին:

82. Կառավարության և Վարչապետի որոշումների, հանձնարարականների կատարման ստուգման կարգը սահմանվում է Կառավարության քարտուղարության կանոնադրությամբ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

83. Կառավարության աշխատակազմը քարտուղարությունն է, որն իրականացնում է Կառավարությունում քննարկվելիք հարցերի նախապատրաստումը և ապահովում Կառավարության և Վարչապետի որոշումների կատարման ստուգումը:

84. Կառավարության քարտուղարությունը ղեկավարում է քարտուղար-նախարարը, որը Կառավարության անդամ է:

85. Կառավարության քարտուղարությունը կազմված է վարչություններից և կառուցվածքային այլ ստորաբաժանումներից:

Կառավարության քարտուղարության կառուցվածքը, իրավասությունը, ինչպես նաև գործունեության կարգը որոշվում են Վարչապետի հաստատած կանոնադրությամբ: Քարտուղարության հաստիքները հաստատվում են Վարչապետի որոշմամբ:

86. Կառավարության քարտուղարության կառուցվածքային ստորաբաժանումները գործում են իրենց կանոնադրություններին համապատասխան, որոնք հաստատում է քարտուղար-նախարարը: Քարտուղարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին նշանակում և պաշտոնից ազատում է Վարչապետը՝ խորհրդակցելով Կառավարության քարտուղար-նախարարի հետ:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐԸ

87. Վարչապետի խորհրդականները Վարչապետի անունից Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման մյուս հանրապետական և տարածքային մարմինների ղեկավարներին են փոխանցում Վարչապետի հանձնարարականները, անցկացնում խորհրդակցություններ, օժանդակում օպերատիվ կառավարման հարցերի լուծմանը, անհրաժեշտության դեպքում պետական կառավարման համապատասխան մարմիններից պահանջում տեղեկատվություն, նախապատրաստում օրենսդրական ակտերի նախագծեր և դրանք ներկայացնում Վարչապետին:

Վարչապետի խորհրդականների միջև պարտականությունների բաշխումը կատարում է Վարչապետը:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

88. Կառավարությունում քաղաքացիների ընդունելությունը, ինչպես նաև նրանց դիմումների, գանգատների և առաջարկությունների քննարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Կառավարության որոշումներին համապատասխան:

89. Կառավարությունում քաղաքացիների ընդունելության, ինչպես նաև նրանց դիմումների, գանգատների և առաջարկությունների քննարկումը կազմակերպում է Կառավարության քարտուղարությունը:

Կառավարությունում քննարկվում և ընթացք են տրվում քաղաքացիների այն դիմումներին, գանգատներին և առաջարկություններին, որոնք լուծում չեն ստացել համապատասխան նախարարություններում, պետական կառավարման հանրապետական և տարածքային մյուս մարմիններում:

90. Կառավարության քարտուղարությունը՝

ա) վերլուծում և ամփոփում է Կառավարությանը հասցեագրված քաղաքացիների դիմումները, գանգատները և առաջարկությունները ու պարբերաբար Վարչապետին տեղեկացնում այդ աշխատանքների վիճակի մասին.

բ) ստուգում է քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, գանգատների և առաջարկությունների քննարկման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների կողմից տարվող աշխատանքը, առաջարկում է միջոցառումներ այդ աշխատանքները բարելավելու ուղղությամբ:

91. Կառավարության քարտուղարությունում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, գանգատների ու առաջարկությունների քննարկման գծով տարված աշխատանքի արդյունքները, ինչպես նաև այդ աշխատանքի վիճակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առանձին նախարարությունների, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների հաշվետվությունները պարբերաբար քննության են առնվում Կառավարության նիստերում:

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

92. Կառավարության գործավարության կազմակերպումը իրականացնում է Կառավարության քարտուղարությունը:

93. Կառավարության գործավարությունը տարվում է Կառավարության քարտուղար-նախարարի հաստատած հրահանգին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում պետական կառավարման մարմինների գործունեության կարգը

(բաժինը լրաց. 15.01.96 ՆՀ-549)

94. Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում պետական կառավարման ոլորտի հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, սույն հրամանագրով և օրենսդրության այլ ակտերով:

95. Պետական կառավարումը մարզում ապահովվում է մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով:

Մարզպետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնում է հետևյալ բնագավառներում՝

- ֆինանսներ,
- տարածքային զարգացում, քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն,
- տրանսպորտ և ճանապարհաշինություն,
- գյուղատնտեսություն,
- կրթություն,
- առողջապահություն,
- սոցիալական պաշտպանություն,
- մշակույթ և սպորտ,
- բնության և շրջակա միջավայրի պահպանություն:

Տարածքային քաղաքականությունը մարզում իրականացվում է նշված բնագավառներում մարզպետին ենթակա ստորաբաժանումների և մարզային ենթակայության կազմակերպությունների ու ձեռնարկությունների միջոցով:

Մարզային ենթակայության կազմակերպությունների և ձեռնարկությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

96. Մարզպետը համակարգում է ազգային անվտանգության, պաշտպանության, ներքին գործերի, կապի, էներգետիկայի, առևտրի և սպասարկումների, հարկային, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ու այլ ոլորտներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգումն ընդգրկում է օրենսդրությամբ մարզպետին վերապահված

իրավասության սահմաններում՝

ա) հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և իրեն ենթակա ստորաբաժանումների ու համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված գործունեության կազմակերպումը.

բ) հանրապետական գործադիր մարմինների համապատասխան մարզի տարածքային ծառայություններից Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից սահմանված կարգով տեղեկատվության ստացումը.

գ) հանրապետական գործադիր մարմինների համապատասխան մարզի տարածքային ծառայությունների ղեկավարների նշանակման և ազատման հարցերին մասնակցությունը.

դ) այլ լիազորությունների իրականացումը:

97. Մարզերում պետական կառավարումն իրականացվում է համապետական և համայնքային շահերի ներդաշնակման, ինչպես նաև մարզպետների և հանրապետական գործադիր մարմինների ու վերջիններիս տարածքային ծառայությունների համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա:

98. Մարզում պետական կառավարումն իրականացնում է մարզպետը:

Մարզպետը նշանակվում և ազատվում է կառավարության կողմից, հաշվետու ու պատասխանատու է նրա առջև:

Երևանի քաղաքապետին նշանակում և ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ վարչապետի ներկայացմամբ: Երևանի քաղաքապետը հաշվետու և պատասխանատու է կառավարության առջև:

Մարզպետն ունի տեղակալ, որը կատարում է մարզպետի հանձնարարականները: Մարզպետի տեղակալին նշանակում և ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ խորհրդակցելով մարզպետի հետ:

Մարզպետը, օրենքով սահմանված լիազորություններից բացի՝

ա) ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների կատարումը.

բ) խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին, սահմանված կարգով կառավարության, վարչապետի և հանրապետական գործադիր մարմինների քննարկմանն է ներկայացնում իր իրավասությանը վերապահված հարցերը, համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների հետ՝ մարզին առնչվող հարցերում.

գ) սահմանված կարգով նախապատրաստում և կառավարությանը առաջարկություններ է ներկայացնում մարզում պետական կառավարման իրականացման համար պետական բյուջեից անհրաժեշտ ամենամյա հատկացումների վերաբերյալ.

դ) մասնակցում է հանրապետական բյուջեի նախագծի, ինչպես նաև կառավարության տարածքային քաղաքականության մշակման աշխատանքներին.

ե) ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում կառավարություն՝ իր գործունեության և մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին, ընթացիկ հաշվետվություններ է ներկայացնում վարչապետին.

զ) անհրաժեշտության դեպքում առաջարկություն է ներկայացնում համապատասխան հանրապետական գործադիր մարմիններին՝ նրանց տարածքային ծառայությունների և վերջիններիս ղեկավարների աշխատանքի վերաբերյալ.

է) պարտադիր քննության է առնում հանրապետական գործադիր մարմինների կողմից մարզպետարանի բաժինների և դրանց ղեկավարների աշխատանքի վերաբերյալ առաջարկությունները և սահմանված ժամկետում այդ մարմիններին տեղեկացնում է ձեռնարկված միջոցների մասին.

ը) ընդհանրացնում է օրենսդրության կիրառման պրակտիկան, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում կառավարություն.

թ) օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցում է դատարանների վճիռների ու որոշումների կատարմանը.

ժ) իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների իրավունքներն ու ազատություններն ապահովելու համար.

ժա) օրենսդրությամբ սահմանված կարգով վերացնում կամ կասեցնում է մարզային ենթակայության կազմակերպությունների և ձեռնարկությունների ղեկավարների օրենսդրությանը հակասող հրամաններն ու որոշումները.

ժբ) միջոցներ է ձեռնարկում մարզի տարածքում պետական սեփականության, բնական ռեսուրսների, պատմության և մշակույթի հուշարձանների, հատուկ պահպանվող այլ օբյեկտների պահպանության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ:

Երևանի քաղաքապետը, օրենսդրությամբ սահմանված կարգով, նաև լուծում է քաղաքի տարածքում հանրահավաքներ, երթեր, ցույցեր և զանգվածային այլ միջոցառումներ անցկացնելու համար թույլտվություն տալու հարցը:

Մարզպետն իր իրավասության սահմաններում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ընդունում է որոշումներ, արձակում կարգադրություններ:

Մարզպետի՝ օրենսդրությանը հակասող որոշումները և կարգադրությունները վերացվում են վարչապետի կողմից:

Մարզպետը չի կարող լինել համայնքի ավագանու անդամ, համատեղության կարգով աշխատել այլ պաշտոններում, զբաղվել մասնավոր ձեռներեցությամբ:

99. Մարզպետը կառավարության տարածքային քաղաքականությունը մարզում իրականացնում է մարզպետարանի միջոցով:

Մարզպետարանի կազմի մեջ մտնում են մարզպետի տեղակալը, մարզպետարանի քարտուղարը և բաժինները:

Մարզպետարանի կանոնադրությունը հաստատում է կառավարությունը:

Մարզպետարանի կառուցվածքը և աշխատողների թվաքանակը մարզպետի ներկայացմամբ հաստատում է վարչապետը:

Մարզպետի տեղակալը փոխարինում է մարզպետին՝ նրա բացակայության ընթացքում:

Մարզպետարանի քարտուղարը պատասխանատու է մարզպետի որոշումների ու կարգադրությունների, այլ պաշտոնական փաստաթղթերի նախապատրաստման ու հրապարակման, մարզպետարանի գործավարության, նամակագրության ու արխիվային գործի կազմակերպման համար:

Մարզպետարանի քարտուղարը կազմակերպում է քաղաքացիների ընդունելությունը, նրանց դիմումների ու գանգատների սահմանված կարգով քննարկումը, կապը հասարակայնության հետ:

Մարզպետարանի բաժիններն իրականացնում են օրենսդրությամբ և մարզպետարանի կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորություններ:

Համապատասխան հանրապետական գործադիր մարմիններ ունեցող մարզպետարանի բաժինների համար պարտադիր է այդ մարմինների՝ իրենց իրավասության շրջանակներում տրված ցուցումների և գիտա-մեթոդական հրահանգների կատարումը:

Հանրապետական գործադիր մարմիններն իրավունք ունեն օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացնել մարզպետարանի համապատասխան բաժինների, նրանց ենթակա կազմակերպությունների և ձեռնարկությունների գործունեության տեսչական ստուգումներ:

Մարզպետարանը իրավաբանական անձ է, ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կնիք, դրոշմակնիք, բանկային հաշիվ և ձևաթղթեր:

100. Մարզպետարանի քարտուղարին, մարզպետարանի բաժինների ղեկավարներին օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում և ազատում է մարզպետը:

Համապատասխան հանրապետական գործադիր մարմիններ ունեցող մարզպետարանի բաժինների ղեկավարների նշանակման մասին անմիջապես տեղեկացվում է հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը:

Համապատասխան հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը կարող է մարզպետին գրավոր, փաստարկված առաջարկություն ներկայացնել մարզպետարանի համապատասխան բաժնի ղեկավարի՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության վերաբերյալ:

Մարզպետը պարտադիր քննության է առնում հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի առաջարկությունը և մեկամսյա ժամկետում տեղեկացնում նրան արդյունքների մասին:

Ձեռնարկած միջոցները անբավարար համարելու դեպքում հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը հարցը կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի քննարկմանը՝ վերջնական լուծման համար:

Մարզպետարանի բաժինների աշխատակիցներին, ինչպես նաև մարզային ենթակայության կազմակերպությունների ու ձեռնարկությունների ղեկավարներին օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում և ազատում է մարզպետը:

Մարզպետարանի քարտուղարը և բաժինների վարիչները չեն կարող լինել որևէ համայնքի ավագանու անդամ, համատեղության կարգով աշխատել այլ պաշտոններում:

101. Մարզի խորհրդի նիստերում մարզպետը՝

ա) համայնքների ղեկավարներին ծանոթացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հանրապետության Նախագահի հրամանագրերին և կարգադրություններին, կառավարության և վարչապետի որոշումներին, իր որոշումներին ու կարգադրություններին և դրանցից բխող տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրներին.

բ) ծանոթանում է համայնքներում տիրող իրավիճակին, տարվող աշխատանքների ընթացքին և ծագած խնդիրներին.

գ) լսում է համայնքների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի, մարզային ենթակայության կազմակերպությունների և ձեռնարկությունների գործունեության վերաբերյալ.

դ) ներդաշնակեցնում է մարզպետարանի և համայնքների ինքնակառավարման մարմինների գործունեությունը, լուծում է կազմակերպական այլ հարցեր:

102. Մարզպետը խորհրդի քննարկմանն է ներկայացնում՝

ա) կառավարությանը և վարչապետին ներկայացվող իր հաշվետվությունները՝ մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի և իր գործունեության մասին.

բ) իր առաջարկությունները մարզի սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան և երկարաժամկետ ծրագրերի վերաբերյալ.

գ) իր առաջարկությունները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի՝ մարզին վերաբերող հատվածի, ինչպես նաև պետական բյուջեից համայնքներին կատարվող հատկացումների վերաբերյալ:

Խորհրդի նիստերին մարզպետի հրավերով կարող են մասնակցել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները, մարզպետարանի բաժինների ղեկավարները և այլ անձինք:

103. Երևանի խորհուրդը քաղաքապետի ներկայացմամբ քննարկում և մինչև Հայաստանի

Հանրապետության կառավարություն ներկայացնելը իր եզրակացությունն է տալիս՝
ա) Երևանի քաղաքապետի հաշվետվությունների վերաբերյալ,
բ) Երևանի սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան և հեռանկարային ծրագրերի վերաբերյալ,
գ) Երևանի քաղաքաշինական գլխավոր հատակագծի վերաբերյալ,
դ) պետական բյուջեի նախագծի՝ Երևան քաղաքին վերաբերող հատվածի, ինչպես նաև պետական բյուջեից Երևանի թաղային համայնքներին նախատեսվող հատկացումների վերաբերյալ Երևանի քաղաքապետի առաջարկների առնչությամբ:

Մարզպետի գործունեությունը կառավարության տարածքային քաղաքականության իրականացման առանձին բնագավառներում

104. Ֆինանսների բնագավառում մարզպետը՝
ա) սահմանված կարգով մշակում և կառավարության քննարկմանը առաջարկություններ է ներկայացնում պետական բյուջեի նախագծի՝ մարզին վերաբերող հատվածի, ինչպես նաև մարզի տարածքի համայնքների բյուջեներին պետական բյուջեից հատկացումների վերաբերյալ.
բ) տնօրինում է պետական բյուջեով մարզին հատկացված միջոցները, վերահսկում է այդ միջոցների նպատակային օգտագործումը.
գ) սահմանված կարգով վերահսկում է պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացված միջոցների ընթացիկ ֆինանսավորումը և դրանց նպատակային օգտագործումը.
դ) աջակցում և մեթոդական օգնություն է ցույց տալիս համայնքների ինքնակառավարման մարմիններին:
105. Տարածքային զարգացման, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում մարզպետը՝
ա) կազմակերպում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծերի կազմումը և սահմանված կարգով ներկայացնում կառավարության հաստատմանը.
բ) առաջարկություններ է ներկայացնում կառավարությանը մարզի բնակավայրերի սահմանների փոփոխման վերաբերյալ.
գ) իր իրավասության սահմաններում կազմակերպում է բնակարանային և այլ շինարարություն, իրականացնում է կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման պատվիրատուի ֆունկցիաներ, ճարտարապետաշինարարական վերահսկողություն, միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարության կասեցման ուղղությամբ.
դ) վերահսկողություն է իրականացնում մարզի տարածքում գտնվող շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի և շահագործման նկատմամբ՝ համագործակցելով համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների հետ.
ե) վերահսկողություն է իրականացնում մարզի տարածքում բնակարանային ֆոնդի ընդլայնման, նորոգման, բարեկարգման և շահագործման նկատմամբ.
զ) օրենսդրությանը համապատասխան ապահովում է մարզում գույքային կադաստրի վարումը.
է) կազմակերպում և վերահսկում է մարզային ենթակայության ջրմուղ-կոյուղու, ջրերի մաքրման և այլ կոմունալ կազմակերպությունների և ձեռնարկությունների աշխատանքը.
ը) վերահսկում է աղբահանությունը, կազմակերպում է աղբի ու թափոնների վերամշակումը:
Վերը նշվածից և օրենքով սահմանվածից բացի տարածքային զարգացման, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում Երևանի քաղաքապետը՝
ա) կազմակերպում է քաղաքի կառուցապատումը, ապահովում է քաղաքային ենթակայության տարածքների բարեկարգումը, սանիտարական մաքրումը.
բ) վերահսկողություն է իրականացնում քաղաքի տարածքում հողաշինարարության, հողօգտագործման և հողի պահպանման նկատմամբ, կանխում է ապօրինի հողօգտագործումը:
106. Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում մարզպետը՝
ա) կազմակերպում է միջհամայնքային հասարակական տրանսպորտի աշխատանքը, մարզային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների և ձեռնարկությունների գործունեությունը,
բ) կազմակերպում է մարզային նշանակության ճանապարհների, կամուրջների, թունելների, այլ ինժեներական կառույցների շինարարությունը, պահպանումը և շահագործումը, աջակցում է հանրապետական նշանակության ճանապարհների շինարարությանը, պահպանմանն ու շահագործմանը:
107. Գյուղատնտեսության բնագավառում մարզպետը՝
ա) օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական ֆոնդի հողերը.
բ) վերահսկողություն է իրականացնում մարզի տարածքում հողաշինարարության, հողօգտագործման և հողի պահպանման նկատմամբ, կանխում է ապօրինի հողօգտագործումը.
գ) օրենսդրությամբ սահմանված կարգով լուծում է համայնքների միջև ծագող հողային վեճերը.
դ) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հողամասերի ամրակցումը և հողի սեփականության կամ օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի

նախապատրաստումն ու հատկացումը.
ե) օրենսդրությամբ սահմանված կարգով բանակցում և պայմանագրեր է կնքում հողատերերի հետ՝ մարզի տարածքում հանրապետական և մարզային ենթակայության օբյեկտների կառուցման համար համապատասխան հողօգտագործման և դրա հետ կապված փոխհատուցումների վերաբերյալ.
զ) օրենսդրությանը համապատասխան ապահովում է մարզում հողային կադաստրի վարումը.
է) իրականացնում է մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցումը, պահպանությունը և շահագործումը, միջոցներ է ձեռնարկում հանրապետական նշանակության ոռոգման համակարգերի նպատակային շահագործման ուղղությամբ.
ը) համակարգում է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված աշխատանքները.
թ) համակարգում է մարզի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների իրականացման և կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման աշխատանքները.
ժ) աջակցում է գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, ագրարային ոլորտում տնտեսավարող այլ սուբյեկտներին՝ արտադրության կազմակերպման և զարգացման գործում:
108. Կրթության բնագավառում մարզպետը՝
ա) իրագործում է պետական հանրակրթական ծրագրերը, կազմակերպում է մարզային ենթակայության պետական կրթական հաստատությունների գործունեությունը և ուսումնադաստիարակչական աշխատանքները, վերահսկում է ոչ պետական կրթական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.
բ) կազմակերպում է մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը:
109. Առողջապահության բնագավառում մարզպետը՝
ա) իրագործում է պետական առողջապահական ծրագրերը, կազմակերպում է մարզային ենթակայության պետական առողջապահական հաստատությունների աշխատանքը, օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է բնակչության անվճար բուժօգնության իրականացումը, վերահսկում է ոչ պետական առողջապահական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.
բ) մարզի տարածքում կազմակերպում և իրականացնում է հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներ, կազմակերպում է սանիտարահիգիենիկ միջոցառումներ վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով.
գ) աջակցում է պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մարմիններին՝ բնակավայրերի ջրամատակարարման աղբյուրների, բնակելի շենքերի, դպրոցների և այլ օբյեկտների սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս.
դ) կազմակերպում է մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը:
110. Սոցիալական պաշտպանության բնագավառում մարզպետը՝
ա) իրագործում է բնակչության պետական սոցիալական պաշտպանության ծրագրերը, կազմակերպում է մարզային ենթակայության սոցիալական պաշտպանության հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը, վերահսկում է մարզի տարածքում սոցիալական պաշտպանության ոչ պետական կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.
բ) կազմակերպում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառումը, համակարգում է մարդասիրական օգնության բաշխումը.
գ) կազմակերպում է գործազուրկների հաշվառումը և զբաղվածության հետ կապված խնդիրների լուծումը.
դ) աջակցում է պետական կենսաթոշակների և նպաստների նշանակման ու վճարման աշխատանքներին.
ե) կազմակերպում է մարզային ենթակայության սոցիալական պաշտպանության հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը.
զ) աջակցում է սոցիալական պաշտպանության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեությանը:
111. Մշակույթի և սպորտի բնագավառում մարզպետը՝
ա) կազմակերպում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային հաստատությունների աշխատանքը, մարզային մշակութային և սպորտային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ, նպաստում է ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը, վերահսկում է մարզի տարածքում ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը.
բ) միջոցներ է ձեռնարկում պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ.
գ) կազմակերպում է մարզային ենթակայության մշակութային և սպորտային օբյեկտների

կառուցումը, հանգստի գոտիների ստեղծումը, պահպանումն ու շահագործումը.
դ) համագործակցում է մարզի տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ:
112. Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում մարզպետը՝
ա) մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իր իրավասության շրջանակներում ապահովում է դրանց իրականացումը մարզի տարածքում.
բ) վերահսկում է ջրերի, անտառների, կանաչ գոտիների, ընդերքի պահպանության և օգտագործման բնագավառում համապատասխան պետական մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը.
գ) աջակցում է արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանությանը և օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը.
դ) համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:
113. Մարզպետի գործունեությանն առնչվող սույն հրամանագրով չկանոնակարգված հարցերը կարգավորվում են օրենսդրության այլ ակտերով և մարզպետարանների կանոնադրությամբ:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգումը

114. Մարզպետը մարզի տարածքում ազգային անվտանգության, ինչպես նաև զինապարտների հաշվառման, զորակոչի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների առնչությամբ հրավիրում է համապատասխան տարածքային ծառայությունների ղեկավարներին և խորհրդակցում նրանց հետ:
115. Մարզպետը մարզի տարածքում ներքին գործերի ոլորտին վերաբերող խնդիրների առնչությամբ հրավիրում է համապատասխան տարածքային ծառայության ղեկավարին և խորհրդակցում նրա հետ:
Մարզի տարածքում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման նպատակով մարզպետն իրավասու է ներքին գործերի տարածքային ծառայության ղեկավարին հանձնարարականներ տալ և կարգադրություններ անել՝
ա) տարերային և տեխնոլոգիական աղետների վտանգի նվազեցման, դրանց հետևանքների վերացման, մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային հատուկ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ.
բ) մարզի տարածքում ապօրինի շինարարության, հողազավթումների, ապօրինի ծառահատման և որսագողության դեպքերի կանխման և արգելման վերաբերյալ.
գ) մարզի տարածքում հանրահավաքների, երթերի, ցույցերի և այլ զանգվածային միջոցառումների անցկացման ընթացքում հասարակական կարգի պահպանման վերաբերյալ.
դ) մարզի համայնքներում զորակոչի և զորահավաքի անցկացումը կազմակերպելու վերաբերյալ:
116. Մարզպետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակներում, կազմակերպում և համակարգում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների վտանգի նվազեցման և դրանց հետևանքների վերացման աշխատանքները, անհրաժեշտության դեպքում մարզի համայնքների ինքնակառավարման մարմիններին, բնակչությանը ներգրավում է տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքների վերացման գործին, կազմակերպում և ղեկավարում է մարզի բնակչության քաղաքացիական պաշտպանության աշխատանքները:
117. Մարզի տարածքում հարկային մարմինների գործունեության, կապի, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և գազամատակարարման խնդիրների առնչությամբ, առևտրի ու սպասարկումների հարցերով մարզպետը հրավիրում է համապատասխան տարածքային ծառայությունների ղեկավարներին և խորհրդակցում նրանց հետ:
Մարզպետը իրավասու է կապի, էներգետիկայի ոլորտների ծառայությունների ղեկավարներին պարտադիր կատարման համար կարգադրություններ անել՝
ա) մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման վերաբերյալ.
բ) տարերային և տեխնոլոգիական աղետների վտանգի նվազեցման և դրանց հետևանքների վերացման վերաբերյալ:
Մարզպետը միջոցներ է ձեռնարկում մարզի տարածքում առևտրի ու սպասարկման ոլորտի ձեռնարկությունների ընդլայնման, դրանց արդյունավետ գործունեության ապահովման ուղղությամբ:
118. Մարզի տարածքում ազգային անվտանգության, զինապարտների հաշվառման, զորակոչի ու վարժական հավաքների կազմակերպման, ներքին գործերի ոլորտին վերաբերող խնդիրների առնչությամբ, ինչպես նաև հարկային մարմնի գործունեության, կապի, էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, գազամատակարարման խնդիրների լուծման հարցերում մարզպետն օժանդակում է հանրապետական գործադիր մարմինների

համապատասխան տարածքային ծառայությունների գործունեությանը, ապահովում դրանց համագործակցությունը տարածքային ծառայությունների և համայնքների ինքնակառավարման մարմինների ու բնակչության հետ:

Մարզպետն իրավունք ունի օրենսդրությամբ սահմանված կարգով և սահմանված բնույթի տեղեկատվություն ստանալ համապատասխան տարածքային ծառայությունների ղեկավարներից:

119. Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում համակարգում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությունը այլ ոլորտներում:

120. Հանրապետական գործադիր մարմինների (բացի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի) տարածքային ծառայությունների ղեկավարների նշանակումն ու ազատումը կատարում է համապատասխան հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը՝ տեղեկացնելով այդ մասին մարզպետին:

Մարզպետը կարող է համապատասխան հանրապետական գործադիր մարմնին գրավոր, փաստարկված առաջարկություն ներկայացնել՝ վերջինիս տարածքային ծառայության ղեկավարի՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության վերաբերյալ:

Հանրապետական գործադիր մարմինը պարտադիր քննության է առնում մարզպետի առաջարկությունը և մեկամսյա ժամկետում մարզպետին տեղեկացնում արդյունքների մասին:

Ձեռնարկած միջոցները անբավարար համարելու դեպքում մարզպետը հարցը կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ վերջնական լուծման համար:

Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի տարածքային ծառայությունների ղեկավարներին նշանակում և ազատում է վարչապետը՝ համապատասխան նախարարների առաջարկությամբ: Վարչապետի այդ որոշումները վավերացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

121. Մարզպետի նստավայրը մարզպետարանի շենքն է, որը գտնվում է մարզի վարչական կենտրոնում:

Մարզպետարանի շենքի վրա և մարզպետի աշխատասենյակում տեղադրվում է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը:

122. Սույն հրամանագրի տեքստում օգտագործվող մարզ, մարզի տարածք, մարզպետ, մարզպետարան, համայնք հասկացությունները, մարզպետի և մարզպետարանի գործունեությանն ու լիազորություններին վերաբերող դրույթները հավասարապես վերաբերում են համապատասխանաբար Երևան քաղաք, Երևան քաղաքի տարածք, Երևանի քաղաքապետ, Երևանի քաղաքապետարան և Երևանի թաղային համայնք հասկացություններին, Երևանի քաղաքապետի և քաղաքապետարանի գործունեությանն ու լիազորություններին:

III. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ կազմավորումից հետո մեկամսյա ժամկետում՝

ա) ձեռնարկել համապատասխան միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մեջ չընդգրկված Հայաստանի Հանրապետության պետական կառավարման հանրապետական մարմինների լուծարման կամ վերակառուցման գործընթացն օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու համար.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության ակտերը համապատասխանեցնել սույն հրամանագրի պահանջներին, իսկ Հայաստանի Հանրապետության օրենքներում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության դեպքում օրենսդրական նախաձեռնության կարգով դիմել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

IV. Սույն հրամանագիրը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ **Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Երևան
25 հուլիսի 1995 թ.
ՆՀ-456

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
16.03.2002, ՆՀ-1063	25.07.1995, ՆՀ-456
31.01.2002, ՆՀ-1037	25.07.1995, ՆՀ-456
08.01.2001, ՆՀ-770	25.07.1995, ՆՀ-456
07.11.2000, ՆՀ-719	25.07.1995, ՆՀ-456
12.10.2000, ՆՀ-690	25.07.1995, ՆՀ-456
20.05.2000, ՆՀ-577	25.07.1995, ՆՀ-456
28.02.2000, ՆՀ-490	25.07.1995, ՆՀ-456
13.11.1999, ՆՀ-426	25.07.1995, ՆՀ-456
15.06.1999, ՆՀ-287	25.07.1995, ՆՀ-456
17.11.1998, ՆՀ-150	25.07.1995, ՆՀ-456
20.04.1998, ՆՀ-9	25.07.1995, ՆՀ-456
03.07.1997, ՆՀ-767	25.07.1995, ՆՀ-456
10.06.1997, ՆՀ-747	25.07.1995, ՆՀ-456
08.11.1996, ՆՀ-667	25.07.1995, ՆՀ-456
15.01.1996, ՆՀ-549	25.07.1995, ՆՀ-456
20.10.1995, ՆՀ-503	25.07.1995, ՆՀ-456

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան